ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ

Եւրոպայի գլխաւոր ազգաց վիճակն ու բնաւորութիւնին :

Ի հատուածս գերմանացի հեղինակ մը գրած է, որ շատ ճամբորդութիւններ ըրած ունի Եւրոպայի ամէն կողմերը. բայց մենք աւելի հետաքրքրական ու զուարճալի բան մը սեպելով կը դնենք, քան թէ ճիշտ առնելով ամէն ազգի վրայօք գրածը :

Լրծոյ. Գերմանացիք դժուարահաւատ են. Ֆրանգիացիք բարեպաշտ. Գաղղիացիք նախանձայոյզ. Իտալացիք աւարաղական. Պանիացիք կեղծաւոր :

Լոսոմոնոյ պահել. Գերմանացիք հաւատարիմ են. Ֆրանգիացիք ապահով. Գաղղիացիք փոփոխամիտ. Իտալացիք խորամանկ. Պանիացիք խաբեբայ :

Լորդոբրդ պալ. Գերմանացիք դանդաղ են. Ֆրանգիացիք անվախ. Գաղղիացիք յանդուգն. Իտալացիք ճիշդ. Պանիացիք զգուշաւոր :

Լերպարանոյ. Գերմանացիք տափակ են. Ֆրանգիացիք բարեձև. Գաղղիացիք վայելուչ. Իտալացիք միջահասակ. Պանիացիք անշնորհք :

Օ գեոպ. Գերմանացիք անպարդ են. Ֆրանգիացիք բազմածախ. Գաղղիացիք փոփոխական. Իտալացիք աղքատին. Պանիացիք վայելուչ :

Ի արմոնոյ. Գերմանացիք ծանր են. Ֆրանգիացիք խոտաբարոյ. Գաղղիացիք համբոյր. Իտալացիք մարդավար. Պանիացիք հպարտ :

Գաղղոնիյ պահել. Գերմանացիք մռայլոտ են. Ֆրանգիացիք կը ծածկեն պէտք չեղածը ու կը յայտնեն էականը. Գաղղիացիք ամէն բան դուրս տուող. Իտալացիք պահող են. Պանիացիք խորհրդական :

Ի-նայնասերոնիոն. Գերմանացիք քիչ պարծենկոտ. Ֆրանգիացիք զուրիշ ազգերը արհամարհող. Գաղղիացիք շողոքորթ. Իտալացիք խոհեմաբար կը յարգեն. Պանիացիք անտարբեր :

Ի-պել ու խմել. Գերմանացիք կենցաղասէր են. Ֆրանգիացիք քաղցրասէր. Գաղղիացիք գողտրասէր. Իտալացիք չափաւոր. Պանիացիք կծծի :

Ի նասել ու էարբերբել. Գերմանացիք անգործ են. Ֆրանգիացիք երկուքին մէջ ալ անխորհրդաբար. Իտալացիք գիւրապատրաստ բարերարելու, բայց միանգամայն վրիժասէր. Պանիացիք անտարբեր :

Լսոսել ու գրել. Գերմանացիք ու Գաղղիացիք գեշ կը խօսին, բայց լաւ կը գրեն. Ֆրանգիացիք թէ լաւ կը խօսին և թէ լաւ կը գրեն. Իտալացիք լաւ կը խօսին, շատ և լաւ կը գրեն. Պանիացիք երկուքն ալ քիչ բայց լաւ :

Ծ՝ասոայ. Գերմանիոյ մէջ ընկեր են. Ֆրանգիոյ մէջ հնազանդ. Գաղղիոյ մէջ տէր. Իտալիոյ մէջ ակնածու. Պանիոյ մէջ խոնարհամիտ :

Կինէ մարդէկ. Գերմանիոյ մէջ տանտիկին են. Ֆրանգիոյ մէջ թագուհի. Գաղղիոյ մէջ խաթուն. Իտալիոյ ու Պանիոյ մէջ կնիկ :

Գիպոնիոն. Գերմանացիք իմաստակ են. Ֆրանգիացիք փիլիսոփայ. Գաղղիացիք հարևանցի անցնող. Իտալացիք վարժապետ. Պանիացիք խորհող :

Ի՝եծաբործոնիոն. Գերմանիոյ իշխանները. Ֆրանգիոյ նաւերը. Գաղղիոյ պալատները. Իտալիոյ եկեղեցիները. Պանիոյ զինարանները :